**Արձանագրություն N 4**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» հոկտեմբերի 2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Աղավնի Բուղուլյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած միակ մասնակցի հետ գնի նվազեցման շուրջ բանակցություններ վարելու մասին.**

«ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով ընթացակարգի շրջանակում կազմակերպված բանակցություններին «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ-ն հայտով առաջարկած գինը թողել է անփոփոխ:

**2. Տեղեկատվություն՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար սահմանված առավելագույն կողմնորոշիչ գինը (սույն ընթացակարգի գնման հայտով օդորակիչների գնման համար սահմանվել է առավելագույն կողմնորոշիչ գին՝ մեկ միավորի համար 900 000 ՀՀ դրամ)՝ հանձնաժողովը որոշեց.

-ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում),

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Սարգիս Արմենակյան

Կարեն Մելքոնյան

Էդգար Տոնականյան

Աղավնի Բուդոյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| Չափաբաժին | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 1 | Օդորակիչներ | «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ<br>«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | պայմանագիր չի կնքվում |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**